| | | | | |
|---|---|---|---|---|
| Ջաւադի | 25,000 | 384,000 | 9,9 | 15,3 |
| Ղուբայի | 38,100 | 115,000 | 6,6 | 3,0 |
| Լէնքորանի | 25,200 | 106,400 | 4,4 | 4,2 |
| Շամախու | 41,400 | 578,500 | 4,5 | 13,9 |
| բոլորը | 199,700 | 1,768,200 | 5,6 | 8,1 |

Պտղաբերութեան կողմից առաջին տեղը բռնում է Ջաւադի գաւառը, յետոյ Շամախին. Ղուբայի գաւառը ամենից անպտղաբեր դուրս եկաւ, վերեւ յիշած պատճառներով՝ այսինքն քամիները հատիկները լցուելու ժամանակ եւ անձրեւները հնձի ժողովելու ժամանակ։

## ԳԱՐԻ

| Գաւառներ | Ցանուած է չետվերտ | Հնձուած է չետվերտ | Պտղաբերութիւն 1890 թ. | 1891 թ. |
|---|---|---|---|---|
| Բաքուի | 20,900 | 206,000 | 5,0 | 9,8 |
| Գեօկչայի | 10,700 | 67,600 | 4,9 | 6,2 |
| Ջաւադի | 7,900 | 144,100 | 11,6 | 18,2 |
| Ղուբայի | 18,030 | 54,780 | 5,9 | 3,0 |
| Լենքորանի | 25,600 | 98,800 | 3,5 | 3,8 |
| Շամախու | 17,200 | 242,500 | 6,9 | 14,1 |
| բոլորը | 100,330 | 813,780 | 5,7 | 8 |

Համեմատելով նախընթաց տարուայ հետ, հունձն աւելացել է աւելի քան մէկու կէս անգամ (292,680 չետվերտով, կամ 56%)։ Ամենալաւ հունձն ստացուել է Ջաւադի գաւառումն, մէկին 18, իսկ ամենավատը Ղուբու գաւառումն մէկին 3։ Առ հասարակ ամբողջ նահանգում գարու հունձը կարելի է համարել շատ լաւ, այսինքն մէկին 8։

## ԲՐԻՆՁ

| Գաւառներ | Ցանուած է չետվերտ | Հնձուած է չետվերտ | Պտղաբերութիւն 1890 թ. | 1891 թ. |
|---|---|---|---|---|
| Գեօկչայի | 810 | 23,400 | 20,3 | 28,0 |